



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 ssarchapet@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 171

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-067-0219-0007 (0001) ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՈՒՂՂՄԱՆ և ՍՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համասեփականատերեր Մնացական Երվանդի Կարապետյանի և Գոհար Խաչատուրի Կարապետյանի կողմից տրված դիմումը, իրավունքի պետական գրանցման թիվ 1375056 վկայականը, առաջնորդվելով «Հորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29/04/2021 թ թիվ 698-Ն կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին որոշման թիվ 1 հավելվածի 6-րդ կետի պահանջներով, այն է՝ 06-067-0219-0001 ծածկագրով հողամասը ըստ կադաստրային քարտեզագրման և հողային ֆոնդի սկզբնական ու ընթացիկ հաշվառման նյութերում ամրագրված է որպես գյուղատնտեսական նշանակության խոտհարք, իսկ ճշտված կադաստրային ծածկագիրն է 06-067-0219-0001 (վկայականում սխալմամբ նշվել է 06-067-0219-0007) միաժամանակ կադաստրային քարտեզներում հողամասերի սեփականության սուբյեկտի սխալների ուղղման համար՝ առաջնորդվելով վերը նշված ՀՀ կառավարության որոշման թիվ 2 հավելվածի 39-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թիվ 1375056 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված կադաստրային ծածկագիրը 06-067-0219-0007-ի փոխարեն նշել 06-067-0219-0001 և տրամադրել նոր նմուշի վկայական
2. ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Գոգավան բնակավայրում գտնվող 06-067-0219-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը ուղղել՝ վարելահողից որպես խոտհարքի:
3. Քանի որ, ըստ ՀՀ կառավարության 11/08/2005 թ թիվ 1484-Ն որոշման 06-067-0219-0001 ծածկագրով հողամասը փոխանցված է համայնքին որպես գյուղատնտեսական արոտ, սակայն տվյալ հողամասը սեփականաշնորհվել է Մնացական և Գոհար Կարապետյաններին որպես գյուղատնտեսական վարելահող, ուստի ելնելով 29/04/2021 թ թիվ 698-Ն ՀՀ կառավարության որոշման թիվ 2 հավելվածի 39-րդ կետի պահանջներով 06-067-0219-0001 ծածկագրով հողամասի սեփականության սուբյեկտը որպես համայնքից ուղղել սեփականաշնորհված անձանց Մնացական և Գոհար Կարապետյանների անվամբ, իսկ հողատեսքը՝ արոտից որպես խոտհարքի:
4. ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի 20/06/2022 թ թիվ 105 որոշումը ճանաչել ուժի վրայ կորցրած:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

2022 թ. 09
գ.Սարչապետ



Համայնքի ղեկավար՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 ssarchapet@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 172

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գումարել Սարչապետ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2022 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը 15:00-ին, Սարչապետի համայնքապետարանի վարչական շենքում՝ ՀՀ, Լոռու մարզ, Սարչապետ համայնք, Սարչապետ բնակավայր, փողոց 1, շենք 67:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 14
գ.Սարչապետ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459 ssarchapet@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 173

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի «Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 47-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելված 1,2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

20 22 թ. 09
գ. Սարչապետ

